



ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐԹԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆԸ

Համառոտ նշանակալային զեկույց (հրապարակման համար մշակված տարբերակ)

2011թ. հոկտեմբեր - դեկտեմբեր

Հայաստանի և Թուրքիայի միջև պաշտոնական երկխոսության ստեղծման պայմաններում երկու երկրների միջև հարաբերությունների նորմալացման գործընթացը ներկայումս էապես կախված է քաղաքացիական հասարակության մակարդակով իրականացվող շփումներից և հասարակական դիվանագիտության շրջանակներում գործադրվող ջանքերից, որոնք ուղղված են պահպանելու ստեղծված միտումները և ձևավորելու երկու հասարակություններում բարենպաստ վերաբերմունք միմյանց նկատմամբ մինչև երկու կողմերի միջև պաշտոնական հարաբերությունների վերսկսումը: Չնայած այն հանգամանքին, որ 2011թ-ի աշնանը Հայաստան-Թուրքիա հարաբերություններում սրվեցին անհարթությունները, «Աջակցություն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավմանը» (SATR) ծրագրի գործընկերների և շահառուների գերակշռող մեծամասնությունը շարունակեց իրենց սովորական աշխատանքը և դիմակայեց բացասական հայտարարությունների ուժեղ, սակայն կարճատև հոսքին, որը պայմանավորված էր Ֆրանսիայի խորհրդարանում ցեղասպանությունների հերքումը քրեականացնող օրինագծի շուրջ ընթացող զարգացումներով: Այս իրողությունը վկայում է SATR ծրագրի կողմից ստեղծված ցանցային կառույցների ամրության մասին՝ հասարակությունում ժամանակ առ ժամանակ արձանագրվող բացասական կարծիքների աճի պայմաններում:

Սույն նշանակալային SATR ծրագրի գործունեության կարճ նկարագիրը բերված է ստորև.

Գործարարների միջև կազմակերպվող միջոցառումներ և ծրագրեր՝

- Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության (ՀԱԳ(Գ)Մ) և Թուրք-հայկական բիզնեսի զարգացման խորհրդի (TABDC) համատեղ ջանքերը կարևոր դերակատարում ունեցան՝ խրախուսելով Թուրքիայի կառավարությանը երկարացնելու մինչև 2012թ-ի հունվարի 31-ը՝ հայկական համարանիշերով բեռնատարների փորձնական 200 մուտքի թույլտվություն. սա հնարավորություն է ընձեռում հայկական տարանցիկ բեռնատարներին հատել Թուրքիայի տարածքը: Այս նվաճումը հնարավոր դարձավ Սևծովյան տնտեսական համագործակցության (ՄՄՏՀ) պիլոտային ծրագրի շրջանակներում: Հայաստանի միջազգային փոխադրողների ասոցիացիան սկսեց օգտվել ՄՄՏՀ-ի մուտքի թույլտվություններից Թուրքիայի տարածքով հայկական բեռնատարների տարանցիկ փոխադրման համար, և 2011թ-ի նոյեմբերին երկու հայկական բեռնատար տարանցիկ երթուղով անցավ Թուրքիայի տարածքով՝ Սամսուն նավահանգստից մինչև Սարփիի անցակետ Թուրքիա-Վրաստան սահմանի վրա:

- 2011թ-ի հոկտեմբերի 4-ից 7-ը ՀԱԳ(Գ)Մ-ն կազմակերպեց Հայկական և թուրքական տուրիստական ընկերությունների ասոցիացիայի (AATTC), ինչպես նաև նրանք հայկական տուրիստական ընկերությունների ներկայացուցիչների այցը վան քաղաք՝ մասնակցելու նրկորդո «Վանի տուրիստական տոնավաճառին», որը վանում անցկացվող Ասիական մետաքսի ճանապարհի առևտրի և արդյունաբերության տոնավաճառի մաս էր կազմում: Այցի արդյունք դարձավ ցուցահանդեսին հայկական տուրիստական գործակալությունների ծառայությունների ցուցադրումը, AATTC-ի այլ անդամների հետ զբոսաշրջիկների համար տարածաշրջանային շրջագայությունների համատեղ փաթեթների մշակումը, կապերի հաստատումը և AATTC-ի համար նոր անդամների հավաքագրումը:

2011թ-ի հոկտեմբերի 19-ից 24-ը ՀԱԳ(Գ)Մ-ն և Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը (ՄՉՄԿ) կազմակերպեցին Գյումրիից և Վանաձորից նրանք գործարար կանանց այցը Դիարբեքի՝ նպատակ ունենալով զարգացնել աշխատանքային համագործակցությունը, գտնել հնարավոր գործընկերներ և մեծացնել կանանց դերակատարումը մերձեցման գործընթացում: Բազում այլ քննարկումների շարքում պայմանավորվածություններ ձևաք բերվեցին «այրան» ըմպելիքի արտադրության տեխնոլոգիան և բաղադրատոմսը շահագրգիռ հայկական ընկերությանը փոխանցելու վերաբերյալ:

- 2011թ-ի նոյեմբերի 22-ից 23-ը ՀԱԳ(Գ)Մ-ն բիզնես համաժողով անցկացրեց Երևանում, որին հաջորդեցին գործարարների միջև հանդիպումներ: Համաժողովին մասնակցեց 30 թուրք գործարար, որոնք ներկայացնում էին թեթև արդյունաբերության, շինարարության, կահույքի արտադրության, հանքարդյունաբերության, ոսկերչության և առևտրի ոլորտները: Համաժողովին ՀԱԳ(Գ)Մ-ն հետագա համագործակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր ստորագրեց Դիարբեքի առևտրի պալատի հետ: Բացի այդ, «Կանանց ֆորում» ՀԿ-ն Հայաստանից և «DOGUNKAD» կազմակերպությունը Թուրքիայից փոխըմբռնման հուշագիր ստորագրեցին գործարար կանանց միջև համագործակցությունը սատարելու վերաբերյալ: Փոփոխալսաստիկ նյութեր արտադրող «Guney Dek» ընկերությունը Դիարբեքիից և «Crown Chemical» ընկերությունը Հայաստանից համաձայնություն ձևաք բերեցին Հայաստանում համատեղ արտադրություն մեկնարկելու վերաբերյալ:

- Եվրասիա համագործակցություն հիմնադրամը (ԵՀՀ) և ՀԱԳ(Գ)Մ-ն օգնեցին կազմակերպել նրկու գործարար ֆորում Գյումրիում «բաց դռների» մեկնանիզմով տրամադրվող դրամաշնորհների միջոցով: 2011թ-ի նոյեմբերի 24-ից 25-ը Շիրակի մրցունակության կենտրոն հիմնադրամի կողմից կազմակերպված «Շիրակ Էքսպո 2011»-ում հատուկ բաժին էր նվիրված Հայաստանի և Թուրքիայի գործարար կանանց, իսկ Գյումրիի զարգացման հիմնադրամի կողմից 2011թ-ի դեկտեմբերի 14-ից 17-ը կազմակերպված և «International Alert» ՀԿ-ի կողմից համաֆինանսավորված Գյումրի-Կարս տնտեսական ֆորումին հանդիպելու հնարավորություն ստացան պանրի, գինու և մեղրի արտադրությանը զբաղվող փոքր ձեռնարկություններ, ինչպես նաև հյուրընկալության ոլորտի ներկայացուցիչներ: Ֆորումների արդյունքում կապեր հաստատվեցին և պայմանագրեր կնքվեցին հայ և թուրք գործարարների միջև: Փոքր ձեռնարկություններն անդրսահմանային համագործակցության նոր հնարավորություններ ձևաք բերեցին:

- ՄՉՄԿ-ն, թուրքական «GAYA» կազմակերպությունը, ՀԱԳ(Գ)Մ-ն և TABDC-ն Հայաստանի և Թուրքիայի միջև տրանսպորտի և բեռնափոխադրումների վերաբերյալ ուսումնասիրություն անցկացրեցին և պատրաստեցին զեկույց [«Հայաստանում, Թուրքիայում և տարածաշրջանում»](#)

տրանսպորտային և միջազգային միջանցքների զարգացման հեռանկարները» խորագրով: Չեկոյցն անդրադարձնում է ճանապարհային, երկաթուղային և համակցված փոխադրումների հարցերին, որոնք հետաքրքրություն են ներկայացնում Հայաստանում և Թուրքիայում շահառուների (կառավարությունների, գործարարների և փորձագետների) համար, ինչպես նաև խթանում է անդրսահմանային բիզնեսի զարգացման վերաբերյալ տեղեկացված որոշումների կայացումը: Չեկոյցում նաև ուսումնասիրվում են Հայաստանի և Թուրքիայի միջև տրանսպորտային հարաբերությունների զարգացման երկու հնարավոր տարբերակներ՝ ներկայիս իրադրության պահպանման և սահմանի բացման պարագայում: Փաստաթղթում բերվող հիմնական փաստարկներից մեկն այն է, որ թե՛ Հայաստանը, թե՛ Թուրքիան անդամակցում են առևտրի և տրանսպորտի ոլորտում գործող հիմնական միջազգային կազմակերպություններին և կոնվենցիաներին: Այդուհանդերձ, Հայաստանի և Թուրքիայի միջև համագործակցությունը խթանելու առումով նման գործիքների ներուժը թերագնահատվել է և լավ չի ուսումնասիրվել: Չեկոյցում նաև առաջարկվում է, որպեսզի Հայաստանի և Թուրքիայի բիզնես ստեղծագիտական իրենց ազդեցությունը գործադրեն, որպեսզի ընդունվեն թուրքական ապրանքների այն հաշիվ-ապրանքագրերը, որտեղ որպես վերջնական նշված է Հայաստանը՝ Թուրքիայի մաքսային ծառայության փաստաթղթային շրջանառության մեջ ներմուծելով Հայաստանի միջազգային «AMD» կոդը, ինչը զգալիորեն կնվազեցնի կոռուպցիոն ռիսկերը:

Լրատվամիջոցներին առնչվող միջոցառումներ՝

- Երևանի մամուլի ակումբը և Իզմիրի համալսարանը հրապարակեցին լրատվամիջոցների մեծածավալ ուսումնասիրության առաջին (որակական) մասը «Հայաստանի և Թուրքիայի ՉԼՄ-ների կողմից Հայաստան-Թուրքիայի հարաբերությունների լուսաբանման հիմնական միտումները», որը երկու կողմերի մասնագետներին կօգնի ընկալել 2008-2010թթ. տեղ գտած փոխադարձ լուսաբանման ուժեղ և թույլ կողմերը: Որակական հետազոտությունն ի հայտ բերեց, որ հարաբերությունների նորմալացման գործընթացի նկատմամբ վերաբերմունքը Հայաստանի և Թուրքիայի ՉԼՄ-ներում զգալի չափով հետևում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքական համատեքստի փոփոխական դինամիկային: Բացի այդ, որոշ դեպքերում արձանագրությունների և ֆուտբոլային դիվանագիտության վերաբերյալ Թուրքիայում լույս տեսնող հրապարակումներից ստեղծվում էր այն տպավորությունը, որ Թուրքիան բանակցում էր ԱՄՆ-ի, այլ ոչ թե՛ Հայաստանի հետ: 2011թ-ի հոկտեմբերի 1-ից նոյեմբերի 15-ն անցկացվել է միաժամանակյա ուսումնասիրություն-մոնիթորինգ, որտեղ ընդգրկվել են որակական հետազոտության առարկա դարձած նույն 10 լրատվամիջոցները: Ուսումնասիրության երկու փուլերի արդյունքները վերլուծվելու և ընդգրկվելու են ավարտական ծրագրային փաստաթղթում: Փաստաթղթում առաջարկություններ կներկայացվեն լուսաբանման որակի բարձրացման վերաբերյալ, ինչը ներկայումս զգալիորեն կախված է հակառակ կողմի նկատմամբ քաղաքական հետաքրքրվածությունից: «Facebook» սոցիալական ցանցում գործող «4-րդ ալիք. Թուրքիա-Հայաստան» խորագրով խումբը շարունակում է որպես կարևոր հարթակ ծառայել Հայաստան-Թուրքիա հարաբերությունների, շահառուների նախաձեռնությունների և միջոցառումների մասին տեղեկատվության փոխանակման համար: Ընդհանուր լրատվամիջոցներին կարևոր նորություններ հաղորդելով հանդերձ՝ այն դարձել է նաև դրանց տարածման միջոց:
- 2011թ-ի հոկտեմբերի 26-ին «Հոդված 27: Արտահայտման ազատություն» հաղորդման եթերում թուրք ռեժիսոր և մշակութային գործիչ Չիդեմ Մաթերը ներկայացրեց «Կարապետ հօբար» խորագրով իր վավերագրական կինոնկարը: Այս միջոցառման կարևորությունը կայանում էր նրանում, որ հայ հանրությանը ներկայացվում էր հայոց ցեղասպանության մասին մի

կինոնկար, որը նկարահանվել է թուրք ռեժիսորի կողմից: Այս իրողությունը ենթադրաբար ընդլայնեց հայ հանրության պատկերացումը Հայաստանի և Թուրքիայի հարաբերությունների մասով թուրք հասարակությունում առկա վերաբերմունքի փոփոխության մասին: Մեկ այլ հեռուստահաղորդում էլ անդրադարձավ Հայաստան-Թուրքիա երկխոսությունում երիտասարդների ներգրավման խնդրին: Այս երկու հաղորդումները «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության եթեր են հեռարձակվել, և յուրաքանչյուրը դիտվել է 10 000 հեռուստադիտողի կողմից:

- 2011թ-ի հոկտեմբերի վերջին ԵՀՀ-ն և Համաշխարհային քաղաքական միտումների կենտրոնը (GPO) Հայաստան հրավիրեցին «CNN Turk» հեռուստաալիքի նկարահանող խմբին: «CNN Turk» հեռուստաալիքի արտասահմանյան նորությունների բաժնի ղեկավար Հանդե Աշիկն այցելեց Հայաստան և հանդիպումներ ունեցավ փորձագետների և սովորական մարդկանց հետ: Նրա այցելության արդյունքում «CNN Turk» հեռուստաալիքի եթեր դուրս եկավ չորս հեռուստահաղորդում նվիրված Հայաստանին, որտեղ շեշտը դրվում էր Հայաստանի տնտեսության, էներգետիկայի ոլորտում առկա հնարավորությունների, հայ-թուրքական երկխոսությունում Հայաստանի քաղաքացիական հասարակության հեռանկարների վրա, ինչպես նաև ներկայացվեցին պատմություններ Թուրքիայում աշխատող գյումրեցի երկու միգրանտ ընտանիքների մասին: «Haberturk» գործակալության և «Radikal» թերթի երկու լրագրող Երևան այցելեցին և լուսաբանեցին 2011թ-ի նոյեմբերին կայացած 7-րդ Միջազգային մանկական և պատանեկան կինոփառատոնը: SATR ծրագրի «բաց դռներով» դրամաշնորհների ծրագրի աջակցությամբ այս փառատոնին մասնակցեց թուրք մուլտիալիկատորների մի խումբ:

Երիտասարդություն և մշակույթ՝

- 2011թ-ի նոյեմբերին ԵՀՀ-ն Երևանում կազմակերպեց Փնչա քուչա երեկո «Մտերիմ ստեղծագործական հանդիպումներ» խորագրով, որը առաջին դեպքն էր, երբ նման ձևաչափն օգտագործվում էր անդրասահմանային խաղաղարարության համատեքստում: [Փնչա քուչա երեկոն](#) ամբողջ աշխարհում ընդունված ձևաչափ է, որի հիմքում ընկած է այն միտքը, որ ներկայացումներն իրականացվում են 20 սլայդի օգնությամբ և դրանցից յուրաքանչյուրը ցուցադրվում է 20 վայրկյան: Հինգ հայ և հինգ թուրք երիտասարդներ ելույթ ունեցան և խոսեցին Հայաստանում հին շենքերի պահպանության ոլորտում քաղաքացիական ակտիվության մասին, Թուրքիայում սոցիալական ցանցերի օգնությամբ դրամական միջոցների հավաքագրման նորարար եղանակների մասին, երգիծական ոճով ներկայացրեցին Հայաստան-Թուրքիա հարաբերություններին առնչվող թերթերի խորագրերը, ինչպես նաև ներկայացրեցին հայկական և թուրքական խոհանոցների ընդհանրությունների գեղարվեստական նկարագիրը: Հանդիսատեսը բաղկացած էր Հայաստանի քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և միջազգային համայնքի 80 ներկայացուցիչներից: Փնչա քուչայի արտոնագրի պահառուները Երևանից և Ստամբուլից համաձայնվեցին կազմակերպել ևս մեկ Փնչա քուչա երեկո Ստամբուլում 2012թ-ի գարնան վերջին:
- 2011թ-ի հոկտեմբերին Թուրքիայում իրենց նկարահանումները սկսեց պրոդյուսեր Վահե Օհանյանի և ռեժիսոր Ադրիեն Գրիգորյանի նկարահանող խումբը, ում հայ-թուրքական համատեղ արտադրության վավերագրական կինոնկար ստեղծելու ծրագիրն ընտրվել էր Հայ-թուրքական կինոպատժոքմի կողմից (ՀԹԿՊ) և արժանացել էր մրցանակի: «Վերադարձ Գյուրուն» վավերագրական կինոնկարում արժարժվելու են Հայաստանի և Թուրքիայի միջև անցած պատմության վերաբերյալ երկխոսություն հաստատելու մարտահրավերները: Ֆիլմում

ներկայացվող պատմության հեղինակը ճանապարհորդում է դեպի իր նախնիների քաղաք Գյուրուն՝ այնտեղ իր արմատները գտնելու նպատակով:

- Թուրքիայում վերջերս ստեղծված [երիտասարդական բանկերը](#), որոնց խթանում է [«Toplum Gonulluleri»](#) կազմակերպությունը, իրականացրել և մոնիթորինգի են ենթարկել երիտասարդների կողմից առաջնորդվող 12 ծրագիր երկու համայնքներում՝ Սամսունում և Ստամբուլում: Սամսունի ծրագրերում ընդգրկված են կենդանիների կերակրման կետերի կառուցումը, անապահով երիտասարդների համար ջուրակի դասերի կազմակերպումը, համայնքում բակկետբոլային մարզաձևերի ստեղծումը, փողոցային թատերական ներկայացումների կազմակերպումը, երաժշտական ստուդիայի հիմնումը, իսկ Ստամբուլի ծրագրերում ընդգրկված են հիփ-հոփ պարային դասընթացների, թենիսի մրցաշարի և փողոցային ներկայացումների կազմակերպումը, ինչպես նաև պատանեկան կենտրոնի համար երաժշտական գործիքների համալրումը: Սա զարգացման «նոու-հաուի», ասել է թե՛ համայնքներում պատանեկան ակտիվության երիտասարդական բանկերի մոդելի փոխանցման օրինակ է Հայաստանից Թուրքիա:

Քաղաքականության հետազոտություններ՝

- ՄՁՄԿ-ն և Թուրքիայի տնտեսական և հասարակական ուսումնասիրությունների հիմնադրամը (TESEV) հրապարակել են երկու վերլուծական փաստաթուղթ Հայաստանի հետ Եվրամիության հարաբերությունների վերաբերյալ և տարածել են դրանք երկու երկրների փորձագետների և այլ շահառուների շրջանում: Փաստաթղթերը կրում են հետևյալ խորագրերը՝ [«Իրավիճակի գնահատում՝ Հայաստան-Թուրքիա բաց սահմանի հետևանքները և նշանակությունը Եվրոպական ինտեգրման համար»](#) և [«Թուրքիայի առևտրային քաղաքականությունը Եվրոպայի, Հարավային Կովկասի և Հայաստանի նկատմամբ»](#), որոնք մատչելի են հանրությանը ՄՁՄԿ-ի կայքում: 2011թ-ի նոյեմբերի 10-ից 11-ն այս ուսումնասիրությունների կարճ նկարագրերը ներկայացվեցին ՄՁՄԿ-ի կողմից անցկացված Հայաստան-Եվրամիություն շահերի պաշտպանության տարեկան համաժողովին, որին ներկա գտնվեցին Հայաստանի և տարածաշրջանի այլ երկրների պետական և հանրային քաղաքականության հաստատությունների, ինչպես օրինակ՝ Արդարադատության նախարարության, Եվրամիության անդամ երկրների, Ռուսաստանի և Թուրքիայի, երկկողմ և բազմակողմ հաստատությունների ներկայացուցիչներ, որոնք մասնակցեցին նաև հատուկ նիստին: Իրենց համապատասխան ծրագրային փաստաթղթերում ՄՁՄԿ-ը և TESEV-ը հրապարակեցին երկու վերլուծություններ և համեմատական ամփոփագրեր և տարածեցին դրանք երկու երկրների փորձագետների և շահառուների շրջանում: Հատուկ նիստին լուրջ մարտահրավեր և թերևս միաժամանակ մեծ նվաճում դարձավ համատեղ քննարկման և վերլուծական հետազոտության գաղափարը:

«Բաց դռներով» դրամաշնորհներ՝

- Երկրորդ Գյումրի-Կարս տնտեսական ֆորումը սատարելուց և «Շիրակ ԷԲՍՊՈ»-ի միջոցով Հայաստանի և Թուրքիայի կին գործարարների միջև կապերը խթանելուց բացի՝ SATR ծրագիրն աջակցել է հայ և թուրք երիտասարդ ճարտարապետների և քաղաքաշինության մասնագետների մասնագիտական ցանցի ստեղծման ծրագրին՝ երիտասարդ մասնագետների միջև գիտելիքների և փորձի փոխանակումը խթանելու և համատեղ ծրագրերի միջոցով նրանց միջև համագործակցությունը ձևավորելու նպատակով: SATR ծրագիրը նաև աջակցում է

Հասմիկ Ստեփանյանի «Հայերի ներդրումը Օսմանյան կայսրությունում» գրքի թարգմանությանը հայերենից թուրքերեն: Գիրքը ներկայացվել է հումանիտար գիտությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից շնորհվող 2011թ-ի մրցանակի մրցույթին: Բացի այդ, Վահան Իշխանյանը մեկնարկեց իր արշավը դեպի Թուրքիայի Հոփա շրջանի գյուղեր՝ այնտեղ համշնչիների հետ մի շարք հարցազրույցներ անցկացնելու և նրանց ավանդույթների, առօրյա կյանքի, լեզվի և Թուրքիայի հասարակությունում ինտեգրման աստիճանի, սոցիալական, տնտեսական և այլ խնդիրների վերաբերյալ լուսանկարներ և տեսանյութեր հավաքելու նպատակով:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը և Կոնսորցիումի անդամներն աջակցում են Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավմանը՝ խթանելով քաղաքացիական հասարակության տարբեր խմբերի մասնակցությունը, գործարար համագործակցության և տարածաշրջանային մասնագիտական ցանցերի հաստատումն ու զարգացումը, ինչպես նաև ժողովրդի կողմից տարածաշրջանում խաղաղության և տնտեսական ինտեգրացիայի առավել կարևորումը: Այս գնկույցի բովանդակության համար պատասխանատու է Կոնսորցիումը: Այստեղ արտահայտված տեսակետները կարող են չհամընկնել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կամ ԱՄՆ կառավարության տեսակետներին: